

Այսքանը կը բաւէ, կարծեմ, «պոլիտիկոս» Արփիարեանին արեւելք ցոյց տալու համար, կարելի է իր երևը յօդուածներուն ամէն մէկ ֆորաքը պայտիսի վերլուծման մը ենթարկել, արդիւնքը միեւնոյնը պիտի ըլլայ: Աւելորդ է այդ նեղութիւնը յանձն առնել: Անցնինք «էս-թախիկոս» Արփիարեանին:

(Շարունակելի) Ա. ՉՊԱՆԵԱՆ.

ՀԱՅԿԱԿԱՆ ՆՈՒԱԳԱՅԱՆԴԵՍ

Ի ՓԱՐՏՁ

Փարիզի Հայկական Միութեան Նախագետ-նութեանը եւ նախընթացի կազմակերպուած հայ երաժշտական շուաքահանդէս մը տեղի ունեցաւ 'Իեկտեմբր' 1ի շաբաթ իրիկունը՝ Salle des Agriculteursի մէջ: Երկիւյթիք փայլուն յաջողութեան ունեցաւ չորսուս մեծահուն երաժիշտ Կոմիտաս վարդապետին թանկագին աշակցութեանը Կոմիտաս վարդապետ, որուն անունը ծանօթ է Անանիոսի ընթերցողներուն այն յօդուածով զոր այս էջերուն մէջ նուիրած ենք իր տաղանդաւոր գործունէութեան, հաճեցաւ՝ հայկական Միութեան խնդրանքով՝ կազմել երեկոյթին յայտապիրը՝ իր ձայնագրած կտորներով, եւ ղեկավարել խորհրդը:

Չորսուած կտորներն էին, ժողովրդական երաժշտութեան համար, Սիփանայ Դաշեր, Հով մարի, Այաքեազ սարն անպէտ ա, Մեք զրակը խնկի ծառ, Անձրեւ եկաւ շաղպեմ, Չիւնար եւ իյնաւնայ մի, Արի արի քն մասազ, Թոյ արա, եգո ջաւն, Միտանի ծառ, Իմ յինարի եարդ, Դարունս ա ձիւն ա արեւ, Կոմուն, Լուսնայն անուշ, Անպէտ ա ձիւն չի գալի, Հաք-բան, Բեքեր, ցոյէր իմ եարդ, Սարտի վրով զնց, Էս գիշեր յուսը սեպա, Օտոր (Ահնայ), Զիզ տու ջաշի. եկերեցական երաժշտութեան համար՝ Հայր Ան, Տիրամայր, Տեր ողորմես, Յիշատակ, Խորհուրդ խորիւն, Հաւիւն իմ պաշտառ սեպի, Ո՛վ զարմանայի, Գեւ մի զարեւրի, Այսօր ձայնն հայրական:

Աստղմէ, « Հով արեւ », « Չիւնար ես », « Տիրամայր », « Հաւիւն », « Տեր ողորմես », « Դարունս ա ձիւն ա արեւ », « Կոմուն », « Իմ յինարի եարդ », « Միտանի ծառ », « Լուսնայն անուշ », « Դաշեր », « Դաշնակի կամ ոմանք խմբի ընկերակցութեամբ », « Հաքբան » զուգորդը, եւ « Այաքեազ սարն անպէտ ա » ու « Բեքեր, ցոյէր », միաձայն երգուած, զաղափար տունին փարիզեան հասարակութեան՝ հայ երաժշտութեան մասին այնպէս ինչպէս այն ժողովուրդը զայն յղացած է եւ կ'երգէ, իսկ միւս կտորները չորս ձայնի համար դաշնակուած, եւ որոնց մէջ

եղանակին ինքնութիւնը միշտ անեղծ կը մնար սակայն, զաղափար կուտային թէ՛ հայ երաժշտութեան եւ թէ՛ Կոմիտաս վարդապետի անձնական գեղեցիկ տաղանդին վրայ: Օր. Մարգարիտ Բաբայան, ՊՊ. Մուղունեան եւ Շահ-Մուրատեան (1) երգեցին, զմայլելի կերպով, « Դաշեր »-ը, եւ Օր. Շուշիկ Բաբայան՝ զաշնակի վրայ նուագեց, ճարտարօրէն, Մոյլ շորուրը եւ Երուանի բոլոր-պարտեւ եղանակները Կոմիտաս վարդապետ ինքն իսկ երգեց, եւ ինչպէս ինքը միայն գիտէ երգել, Տիրամայրը եւ Հաւիւնը Հասարակութիւնը բուռն ծափերով ընդունեցաւ այդ բոլոր կտորները եւ անոնցմէ 5—6 հարց կրկնել տուաւ: Խորհրդները երգեւեցան խմբի մը կողմէ որ կազմուած էր Լա-մուրէօի եւ Բոյոնի նուագահանդէսներուն մասնակցող երգչներէ:

Պ. Չօպանեան արտասանեց բանախօսութիւն մը հայ երաժշտութեան եւ բանաստեղծութեան մասին:

Սրաբ լեցուն էր խուռն բազմութեամբ, որուն կէտէն աւելին՝ Եւրոպացիներ էին. ներկայից մէջ կային ծանօթ անձնաւորութիւններ, ինչպէս Օփերայի տնօրէնը Կայետա, Պուրկո-Տիւլուարէ յայտնի երաժիշտը, Տիւլիմուա Կոնստանտինովի ռուսացի, Մորիս Պուշոր բանաստեղծը, Տրպիւն-Մարտին քերթողուհին, Օտոր Քերթին աշխատակիցներէն՝ ՊՊ. Փոլ Կիւս եւ Փոլ Մուշնի, Փիէր Բիւրաք, Լուի Տիւ-միւր, բազմաթիւ ներկայացուցիչներ ֆրանսական եւ օտար թերթերու, Փարիզի ազնուական դասակարգին՝ իշխանուհի տը Փոլինաք, իշխանուհի Սիսթիլա, զերակոմս Կուլմիւր, Մէ-յէ, Մաքլեր, Էւն, Էւն:

Այս նուագահանդէսը խոր հանգիս պատճառեց ներկայ երգչ Հայերուն եւ անմոռանալի տպաւորութիւն մը թողուց Եւրոպացիներուն վրայ Մեր յաջորդ թիւով՝ մանրամասնութիւնները:

ՅՕԳԻՒԱՆ ՄԸ ԽՐԻՍՏԵԱՆ ՀԱՅՐԻԿ ՄԱՍԻՆ

« Մերբիւր տը Ֆրանս » ամսագիրն իբր յոյնք. 15ի թիւին մէջ հրատարակեց Պ. Չօպանեանի մէկ ընդարձակ ուսումնասիրութիւնը Խրիմեան Հայրիկի ազգային ու գրական գործունէութեան նուիրուած: Այս յօդուածը զբո-ւած էր տարի մը առաջ:

(1) ՊՊ. Մուղունեան եւ Շահ-Մուրատեան վերջուս ընդունեցան իբր աշակերտ՝ Փարիզի Բոնափմարտը 260 հոգիի մէջէն որ ներկայացած էին մաւրի մրցակիւն, 16 հոգի միայն ընդունեցան. որոնք եկուիք Հայ:

Le Gérant: FRÉDÉRIC MACLER

Imp. D. DOGHRAMADJIAN
18, Rue des Gobelins, Paris.